# «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 10

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումները

2011 թվականի հունիսի 20-ին կայացել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստ:

Ստորև ներկայացվում է խորհրդի կողմից ընդունված որոշումները (խորհրդի նիստի արձանագրությունը կազմվել է 20.06.2011թ.-ին):

Վ. Բեգլարյան Գլխավոր Տնօրեն, Տնօրենների Խորհրդի անդամ

____________________

(ստորագրություն)

22.06.2011թ.

## ««ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ

«20» հունիսի 2011 թ. N 4-2011/01

ք.Ստեփանակերտ

## «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.15 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 20.06.2011թ. նիստի 4-2011 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է

1. Ընկերության խորհրդի նախագահ ընտրել Սպարտակ Թևոսյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունիսի 20-ից:

Խորհրդի նախագահ՝ Ս. Թևոսյան

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունիսի 2011 թ. N 4-2011/02

ք.Ստեփանակերտ

## «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.10 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 20.06.2011թ. նիստի 4-2011 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. Ընկերության խորհրդի քարտուղար ընտրել Դմիտրի Բեգլովին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունիսի 20-ից:

**Խորհրդի նախագահ՝ Ս. Թևոսյան**

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունիսի 2011 թ. N 4-2011/03

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.4 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 20.06.2011թ. նիստի 4-2011 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. 2011թ. օգոստոսի 1-ին, հեռակա կարգով քվերակություն իրականացնելու միջոցով, գումարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով:
2. Բաժնետերերի ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2011թ. հունիսի 21-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

3. Հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի օրակարգը՝ ընդգրկելով հետևյալ հարցը.

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 3.673.926.000 (երեք միլիարդ վեց հարյուր յոթանասուներեք միլիոն ինը հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 3.673.926 (երեք միլիոն վեց հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր քսանվեց) հատ, 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսեր տեղաբաշխելու մասին:

4. Բաժնետերերի ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցել էլետրոնային փոստի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ծանուցումը տրամադրել առձեռն կամ փոստով:

5. Հաստատել քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը՝ համաձայն հավելված 1-ի:

6. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը լրացված քվեաթերթիկները կարող են ուղարկել (ներկայացնել) ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա հասցեով՝ մինչև 2011 թվականի օգոստոսի 1-ը, ժամը 16:00-ն:

7. Հանձնարարել Ընկերության գլխավոր տնօրենին ապահովել սույն որոշմամբ նախատեսված աշխատաքների իրականացումը:

8. Հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը՝ համաձայն հավելված 2-ի:

9. Հանձնարարել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ գլխավոր տնօրենին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ կնքել «Բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման և տեղաբաշխման նախապատրաստական աշխատանքների կազմակերպման» պայմանագիր և ապահովել հետագա միջոցառումների բնականոն իրականացումը՝ համաձայն սույն որոշմամբ հաստատված «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունիսի 20-ից:

**Խորհրդի նախագահ՝ Ս. Թևոսյան**

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունիսի 2011 թ. N 4-2011/04

**ք.Ստեփանակերտ**

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի ժ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 13.3 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի

20.06.2011թ. նիստի 4-2011 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. Ընկերության գլխավոր տնօրեն նշանակել Վահրամ Բեգլարյանին և կնքել նրա հետ աշխատանքային պայմանագիր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունիսի 20-ից:

Խորհրդի նախագահ՝ Ս. Թևոսյան»